

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. Արցախի բանահյուսությունը, Երևան, Էդիթ Պրինտ, 2015, 748 էջ:



Վերջերս լույս է տեսել Արցախի կրթության նախարարի տեղակալ, Ստեփանակերտի պետական համալսարանի դասախոս, ք. գ. թ., բանահավաք-բանագետ Արմեն Յու. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» մեծածավալ ժողովածուն, որի խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանը: Ժողովածուն բացվում է ներածությամբ, որտեղ կազմողը «Արցախի անցած պատմական ուղու» վերաբերյալ ներկայացնում է գիտապատմական, գիտատեղեկատվական հարուստ տվյալներ: Արցախահայությունը, շուրջ յոթ տասնամյակ գտնվելով Ադրբեջանի գաղութատիրական ճնշման ներքո, նրա կազմից դուրս գալու նպատակ է հետապնդել՝ շարունակելով կառուցել ու բարեկարգել հայրենի երկրամասը: Այսօր արցախահայությունն աշխարհին ներկայանում է բազմահարուստ պատմությամբ ու մշակույթով, որի անբաժան մասն է կազմում դարերի ընթացքում ձևավորված ժողովրդական բանահյուսությունը: Բանահյուսական նյութերի մշակութային պատմական կարևորությամբ ու անդառնալի կորստյան վտանգից փրկելու առաքելությամբ են պայմանավորված Ա. Սարգսյանի նախաձեռնած այս գործի դրդապատճառները: «Արցախ. պատմական համառոտ ակնարկում» նա անդրադառնում է արցախահայոց բանահյուսական նյութերի գրառման պատմությանը՝ վկայակոչելով Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահարյանների բանահավաքչական գործունեության պատմամշակութային կարևորությունը: Նրանք 1860 թ. Շուշիում գրառել են հեքիաթներ, զվարճախոսություններ, զրույցներ: Դրանով, ի դեպ, ազդարարվել է բանահավաքչության բնագավառում նախնական ձեռքբերումների սկիզբը: Հետզհետե կարևորվում էր հետաքրքրությունը բանահավաքչության նկատմամբ: Մ. Բարխուդարյանը, լինելով մայրենի բարբառին քաջատեղյակ, ձեռնամուխ է լինում բանահյուսական նյութերի գրառման աշխատանքներին: Նա գրառում է ավանդություններ, զրույցներ, առակներ, հանելուկներ.

դրանք հրատարակվել են «Բարոյական առածներ» ժողովածուում: Ա. Մարգսյանը երախտագիտությամբ է հիշատակում նաև ծնունդով շուշեցի, Բաքվի պետական հայկական մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարգարիտ Գրիգորյան - Սպանդարյանի վաստակը, ով 1960-ական թվականներից Շուշիից և Արցախի տարբեր գյուղերից գրառել է բազմաժանր նյութեր. դրանք ամփոփվել են նրա «Հայ ժողովրդական հեքիաթներ» ու «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուներում: 1960–1970-ական թվականներին Արցախի ժողովրդական բանահյուսությունը հարստանում է Բ. Ղազիյանի, Ա. Ղազիյանի, Մ. Առաքելյանի, Մ. Մխիթարյանի, Մ. Օհանջանյանի, Լ. Հարությունյանի գրառումներով: Ա. Մարգսյանի վկայությամբ, նշված բանահավաքների գործունեությունը լուրջ ներդրում է Արցախի բանահյուսական ժառանգությունը կորստից փրկելու գործում: Բանագետ-բանահավաքը, սակայն, ցավով է նշում, որ նրանք հաճախ են անտեսել Ղարաբաղի բարբառի խոսվածքների յուրահատկությունները՝ սկզբնաղբյուրները բարբառի ուսումնասիրության համար հաճախ դարձնելով ոչ հուսալի: Բառապաշարային մակարդակում բարբառային օրինաչափությունների աղավաղումները Ա. Մարգսյանը պայմանավորում է բարբառին ոչ հատուկ գրական հայերենի բազմաթիվ բառերի գործածությամբ: Նա ավստասանքով է նշում, որ բանասացները հաճախ են նյութը հնչյունաքերականական օրինաչափությունների խախտումներով ներկայացրել՝ ձգտելով այն մոտեցնել գրական հայերենին: Նման մոտեցմամբ, անշուշտ, խաթարվում է նյութի բնագրային արժեքը: Մեր օրերում, առավել քան, կարևորվում է Ա. Մարգսյանի ներդրումը՝ հայրենի երկրամասի հոգևոր-մշակութային արժեքները կորստից փրկելու, այն սերունդներին փոխանցելու, ճանաչելի դարձնելու գործում: Նա ավստսում է, որ հազարամյակների ընթացքում Արցախի ճոխ բանահյուսության միայն մի մասն է փրկվել՝ ժամանակին գրի չառնվելու պատճառով: Բանագետ-բանահավաքը՝ բացը լրացնելու նպատակով, 22 տարվա ընթացքում Արցախի 163 բնակավայրերից գրառել է ավելի քան 8078 միավոր տարածանք բանահյուսական նյութ: Ա. Մարգսյանը դրանք ներկայացնելիս առաջնորդվել է գիտական տառադարձության կանոնների պահպանմամբ: Յուրաքանչյուր նմուշ ներկայացրել է բանասացի մայրենի խոսվածքով:

Ա. Մարգսյանն Արցախի վիպական ժանրերից ամենակենսունակը համարել է զվարճախոսությունները (ի դեպ, մերօրյա զվարճախոսները գյուղերում կրում են Պըլը-Պուղի մականունը): Այն տեսանելի դարձնելու նպատակով՝ ստորև ներկայացնում ենք Մարտակերտի Վանք գյուղի բնա-

կիչ, Ղըլէշի Միշայի գվարճախոսություններից հետևյալ բնորոշ նմուշը. «Միշան էշի վրա նստած գնում է Շամխոր: Շամխորցիների այն հարցին, թե՞ որտեղացի՞ ես. Նա պատասխանում է. «Քյը մատաղ, ես դարաբաղցի յըմ, համա տակենս շամխորեցի յա» (էջ 33):

Բանահավաք - բանագետն ամենայն լրջությամբ է իրագործել իր առջև դրված խնդիրները: Նրա գրառումներում խստորեն պահպանված են բարբառի գիտական տառադարձության կանոնները: Յուրաքանչյուր նմուշ ներկայացված է, ինչպես ասվեց, բանասացի մայրենի խոսվածքով. նույն բանասացի հաղորդած տարբեր նյութերում, սակայն, նկատելի են արտասանական զուգաձևություններ: Ժողովածուում Ա. Սարգսյանի կողմից գրառված նյութերը հետևյալ պատկերն են ներկայացնում.

1. հեքիաթները զարգացման հեռանկարներ չունեն և աստիճանաբար մոռացության են մատնվում,

2. ավանդություններն ու առակները ևս լայն կիրառություն չունեն, քանի որ տարեց բանասացները զրկված էին բանահյուսական նյութը մտապահելու կարողությամբ,

3. վերացման եզրին է քնարական բանահյուսությունը. գրեթե վերացել են պարերգերը, ծիսերգերն ու հորովելները:

Հայ բանագիտության բնագավառում Ա. Սարգսյանի կազմած սույն ժողովածուն էթնոլոգիային յուրահատկություններով, ինքնատիպությամբ բացառիկ արժեք է ներկայացնում: Դրանում ընդգրկված նյութերը վկայում են, որ կազմողը բանահավաքչության բնագավառում զգալի արդյունքների է հասել: Նրա նախաձեռնությունը՝ հայրենակիցներին մշտապես բուն արմատներին մերձեցնելու, դրանցից երբեք չօտարվելու առաքելությամբ է պայմանավորված:

Ժողովածուն հնարավորություն է ընձեռում ծանոթանալու հայ հոգևոր մշակույթի ամենատարբեր բնագավառներին: Յուրաքանչյուր բանահավաքի հայտնի է բանահյուսական աշխատանքների հետ կապված դժվարությունների հաղթահարման ուղիները: Բանահավաք - բանասաց կապերի ամրագրման գործում միշտ պահանջվել ու պահանջվում են համառ ջանքեր: Աշխատության կարևորությունն առավել քան արժևորվում է նյութերի գրառման, հրատարակման աշխատանքները համակարգելու, գիտական յուրատիպ սկզբունքներով ու մոտեցումներով՝ Արցախի հայաշունչ կենսակերպը հասարակության լայն շերտերին ու աշխարհին ներկայացնելու հույժ կարևոր գործում: Ժողովածուում սակավաթիվ նյութեր են ընդգրկվել նաև Ղարաբաղի Մեհտիշենի և Չայլուի խոսվածքներով:

Դրանց կրողները, ի դեպ, 1828–1830 թթ. Պարսկաստանի Խոյի և Ուրմիայի գավառներից գաղթած հայերի հետնորդներն էին:

Ժողովածուն կազմված է հետևյալ գլուխներից. 1. վիպական բանահյուսություն գլխում ընդգրկված են հեքիաթներ, ավանդազրույցներ, առակներ, զվարճախոսություններ, 2. քնարական բանահյուսություն գլխում՝ խաղիկներ և չափածո այլ ստեղծագործություններ, 3. ասութային բանահյուսությունն ընդգրկում է «Առած-ասացվածքներ», «Անեծք-օրհնանքներ», «Օրհնանք-բարեմատյանքներ», «Շուտասելուկներ», «Հանգախաղեր». առանձին բաժիններով ներկայացված են գյուղերի, քաղաքների և մարդկանց մականունները, 4. ժողովածուում ընդգրկված են հայրենի լեռների, քարերի, ջրերի, բույսերի ու կենդանիների մասին ավանդազրույցներ:

Ա. Սարգսյանը նաև անդրադառնում է ժողովածուում ընդգրկված հեքիաթների մոտիվային ու սյուժետային առանձնահատկությունների բացահայտումներին՝ դրանով իսկ օգնելով հեքիաթագիտությանը զբաղվողներին մի ընդհանուր լեզու գտնել ոչ միայն հայկական, այլև՝ տարբեր ժողովուրդների բանարվեստի ներքին բովանդակությանը հաղորդակցվելու գործում:

Ի դեպ, Ա. Սարգսյանի վկայությամբ, հրաշապատում և իրապատում հեքիաթներում այլևս չի գործածվում ներկայումս որպես հանելուկ հանդես եկող՝ «Քաթ-քաթ, մին չվալ ցակատ, վեչ կօթ օնե, վեչ՝ վեսկեռ» չափածո նախաբանը: Լայն կիրառություն ունեն «Իլալ ա, չի լալ», «Ինում ա, չինում» ավանդական սկսվածքներն ու վերջաբան բանաձևումները՝ «Յերգինիան իրեք խնձօր ա վեր ընգնես, մինը՝ էս քաթը ըսօղեն, մինը՝ սկընողեն, մինն էլ լուս աշխարք տուս ընօղեն»: Մի շարք հեքիաթների հատուկ են միջնամասային բանաձևերը՝ «Վերջը շատ ա քյիս, խըրեգյ ա քյիս, հըսնես ա մին խօր ծօր»: Նկատենք նաև, որ երբեմնի երկարաշունչ հեքիաթները մեր օրերում դիտարկվում են իբրև անցյալի մոռացված հիշողություններ:

Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» ժողովածուն իր սկզբնաղբյուրային կարևորությամբ բացառիկ է:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ